



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՍԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԶԱԼԻՖՈՐՆԻՈՅ ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԵԱՆ ՆՈՐ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

Չորեքշաբթի, 19 Մարտի կեսօրին, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան ընդունեց այցելութիւնը Զալիֆորնիոյ Հայ Գրողներու միութեան վարչութեան անդամներու: Այցելութիւնը տեղի կ'ունենար փոխադարձ ծանօթացումի նպատակով, նկատի ունենալով, որ միութիւնը վերջերս ունեցած էր Նոր վարչութիւն մը:

Այցելու պատուիրակութեան մաս կը կազմէին միութեան նախագահը՝ Գրիշ Դաւթեան, փոխ նախագահը՝ Պօղոս Գուրբէլեան, եւ անդամներ՝ Գեորգ Զրիստիսեան, Ֆիրա Աքեան եւ Ներսէս Մեսրոպեան Բալայեան: Առաջնորդ Սրբազանին կողքին, հանդիպումին մասնակից եղաւ Հոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիլիւմեան:

Գ. Դաւթեան Առաջնորդ Սրբազանին ներկայացուց պաշտօնակից գրողները: Հանդիպումը առիթ եղաւ խորհրդակցելու ընդհանրապէս հայ գրողն ու մասնաւորաբար Զալիֆորնիոյ հայ գրողներու միութիւնը մտահոգող հարցերու շուրջ: Անոնք նաեւ ակնարկութիւն ըրին կարգ մը ծրագիրներու, ինչպէս՝ գրական թերթի մը հրատարակումը: Հիւր պատուիրակները նշեցին, թէ անհրաժեշտ է որ մեր հասարակական կեանքին մէջ, գրողները անելի ներգործօն դերակատարութեան հրաւիրուին, վեր առին ժողովուրդին ու յատկապէս Նորահաս սերունդներուն եւ աշակերտութեան հետ գրողներու հանդիպումներու աշխուժացման կարելորդութիւնը:

Առաջնորդ Սրբազանը ողջունեց միութեան ներկայացուցիչները, շնորհաւորեց Նորընտիր վարչութիւնը եւ գնահատեց միութեան գործունեութիւնը, պատրաստակամութիւն յայտնելով արծարծուած մտահոգութեանց գծով ըստ կարելոյն աջակցիլ միութեան ճիգերուն եւ անհրաժեշտութեան պարագային, Ազգ. Առաջնորդարանի սրահը տրամադրել միութեան գրական ձեռնարկներուն:

PRELATE WELCOMES BOARD MEMBERS OF THE ARMENIAN WRITERS ASSOCIATION OF CALIFORNIA

On Wednesday, May 19th, 2010, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed the new board of the Armenian Writers Association of California (AWAOC).

The delegation consisted of AWAOC President Mr. Krish Tavitian, Vice-President Mr. Boghos Kupelian, and members Mr. Kevork Kristinian, Ms. Fira Akyan, and Mr. Nerses Mesropyan Palayan.

After the introduction of the members, a discussion ensued on the challenges facing Armenian writers in general and the AWAOC in specific, and presented a number of possible projects, such as the publication of a literary newspaper. They also spoke of the role of writers in the mainstream, stressing the importance of more interaction and stronger connections between writers and the general public and especially youth.

In conclusion the Prelate congratulated the new board members, commended the work of the AWAOC, and expressed the readiness of the Prelacy to lend its support to alleviating the concerns voiced by the organization and to provide the hall to hold their events.